

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 27

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

31.10. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյան - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյան - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա. Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Աղլոյանը, Վ. Դոխոյանը, Ս.Խեչումյանը, Հ. Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ավանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. ՀՀ Նախագահի՝ Լոռու մարզ կատարած աշխատանքային այցի մասին /Ա.Նալբանդյան/
2. ՀՀ Վարչապետի մոտ կայացած խորհրդակցության մասին /Ա.Նալբանդյան/
3. Մարզպետարանի կայք էջի հետ կապված խնդիրների մասին /Ա.Նալբանդյան/
4. «Հայաստան համահայկական հիմնադրամի» հեռուստամարաթոն 2016-ի մասին /Ն.Սարգսյան/
5. ա/ Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման մասին
բ/ Համայնքներում բյուջեների կազմման և հնգամյա ծրագրերը արդյունավետ կազմելու մասին
/գործընթացը թափանցիկ դարձնելու, հանրային լուսմներ կազմակերպելու և հասարակական կազմակերպություններին ներառելու մասին/ /Զեկ.Հ.Պապոյան/
6. ա/ Աշխատակազմի ղեկավարի մրցույթի մասին
բ/ Մարզպետարանի աշխատակազմի քաղ.ծառայողների ատեստավորման և որոշ քաղաքացիական ծառայողների դասային աստիճանների բարձրացման մասին /Զեկ. Ա.Աղլոյան/
7. Աշնանացան ցորենի առաջին վերարտադրության, սերմացուների , պարարտանյութերի բաշխման և պարտքերի հավաքագրման աշխատանքների մասին /Զեկ.Գ.Հակոբյան/
8. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ. Թադևոսյանին , ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել և ըստ ոլորտների ծրագրերի նախնական տարբերակներ և տեղեկատվություն ներկայացնել՝ մարզի զարգացման 5-ամյա ծրագրերի կազմման ուղղությամբ, դրանում պարտադիր կարգով ներառելով նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը:

/Ժամկետ՝ 15.12.16թ/

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն. Սարգսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել «Հայաստան համահայկական հիմնադրամի» կողմից իրականացվող 2016թ. մարաթոն - դրամահավաքի պատշաճ կազմակերպման և անցկացման ուղղությամբ՝ ապահովելով նաև մարզի համայնքների և կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը :

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին՝

Անհրաժեշտ մեթոդական և խորհրդատվական աջակցություն ցուցաբերել մարզի համայնքներին՝ 5-ամյա իրատեսական ծրագրերի կազմման ուղղությամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝
ա/ Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները կազմելու ուղղությամբ, դրանցում ներառելով նաև տարվա ընթացքում կատարած աշխատանքները, բացթողումները և առաջարկությունները.

բ/ Միջոցներ ձեռնարկել ստորաբաժանումների աշխատակիցների կողմից ամենամյա արձակուրդից օգտվելու սահմանված կարգը պահպանելու ուղղությամբ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին, մարզպետի օգնականներ Ա. Սարգսյանին, Տ. Էվինյանին՝

Անհրաժեշտ հետևողական աշխատանքներ իրականացնել ու միջոցներ ձեռնարկել մարզպետարանի և համայնքների կայքէջերի անխափան, թափանցիկ և հրապարակային գործունեության ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում, առաջացած խնդիրների լուծման նպատակով, կազմակերպել քննարկումներ և ներկայացնել առաջարկություններ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել Երևանի բժշկական համալսարանի ուսանողների, այլ մարզերում աշխատող Լոռու մարզի բնակիչ բժիշկների հետ՝ մարզի բժշկական կազմակերպությունները որակյալ բժիշկ-մասնագետներով համալրելու և որակյալ բուժ. ծառայություններ մատուցելու նպատակով:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան

Հեռ. 0322/4- 32- 99/